Ներսէն ծածուկ և յայտնապէս. միով բանիւ հայ քրիստոնէի կատարեալ տիպար։



ԱԹԱՆԱՍ ԱՂԱ ԼԱԼԱՅԵԱՆՑ

Խան Պօղոսը իւր հիւրերի հետ սեղան բազմած ժամանակ՝ նորա որդիները աւագութեան կարգով նորա սեղանի առաջ հարուած՝ ըստ հայկական վաղեմի սովորութեան՝ ամենայն հպատակութեամբ ծառայութիւն կմատուցանէին։ Նորա որդիքն հետեւեալն են՝ ըստ աւագութեան 1. Աթանաս, 2. Յովհաննէս, 3. Աբրահամ, 4. Մկրտիչ, 5. Մարգարէ, 6. Գէորգ, 7. Յակոբ և 8 Կարապետ։ Սոցանից երկոքեան այսինքն Յակոբն և Յովհաննէսն վախճանուել են Պօղոս աղայի կենդանութեան ժամանակ, նորա միակ զուտարն էլ հնգամեայ հասակում է վախճան-